



Աշխատություն 03(07), Մարտ 2007, Երևան, Հայաստան
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

Աղքատության կրճատումը Հայաստանում. հին չափանիշներով նոր կյանքը

Մուշեղ Թումասյան

*Թողարկումը պատրաստվել է «Աջակցություն ԱՅԴԾ գործընթացին» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի
Չարգացման Ծրագրի և Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Կովկասյան վագրը
3. Աղքատների եկամուտները և աղքատությունը
4. Աղքատության կրճատման պատկերը
5. Հին չափանիշներով նոր կյանքը
6. Հավելվածներ

«Աղքատության կրճատումը Հայաստանում. հին չափանիշներով նոր կյանքը»
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան 2007
info@edrc.am, www.edrc.am

1.Ներածություն

1999-2005 թվականների ընթացքում միջին տարեկան տնտեսական աճը կազմել է 11.2 տոկոս, կամ կուտակային 88.7 տոկոս: Աճի նման տեմպերը չափազանց բարձր են, ուստի և Հայաստանը համեմատվում է Հարավարևելյան Ասիայի «Ասիական վագրեր» տնտեսությունների հետ: Տնտեսական աճի շուրջ 1/3 մասն ապահովվել է շինարարության հաշվին, ինչը նշանակում է, որ աղքատները տնտեսական աճի գործընթացին մասնակցելու շանսեր կարող էին ունենալ: Այնուհանդերձ, 2005 և 2004 ՏՏԿԱ հետազոտությունների հիման վրա տրվող աղքատության և անհավասարության կրճատման գնահատականները թվում են անհավանական բարձր: 1999-2005 թվականների ընթացքում աղքատությունը կրճատվել է 47 տոկոսով, իսկ ծայրահեղ աղքատությունը 78 տոկոսով: Նույն ընթացքում Ջինի գործակիցն ըստ եկամուտների կրճատվել է 40 տոկոսով և ըստ սպառման՝ 15 տոկոսով:

Ստացվում է, որ ավելի քան 800 հազար մարդ դուրս է եկել աղքատությունից, իսկ 500 հազար մարդ՝ ծայրահեղ աղքատությունից: Սա այն դեպքում, երբ, ըստ էության, միայն շինարարության, գյուղատնտեսության և ցածր վարձատրվող մի քանի այլ, սահմանափակ, ոլորտներում է հնարավոր աղքատների զբաղվածության և եկամուտների աճ: Պետության վերաբաշխող ֆունկցիան չափազանց փոքր է¹, մարզերի միջև անհավասարությունը և եկամուտների բեռնավածությունը նկատելի է բոլորին: Աղքատության այս զանգվածային հաղթահարման հիմքերը վերլուծաբաններիս դեռևս չի հաջողվում հիմնավորել և համոզել:

Մեր տնօրինության տակ առկա տվյալների ոչ բավարար մակարդակը թույլ չի տալիս առավել մանրամասն վերլուծություններ կատարել և գնահատել աղքատության կրճատման վրա տնտեսական աճի ազդեցությունը: Մենք փորձել ենք գնահատել սպառման ապահովման առումով առանձին եկամուտների դերը: Ընդհանուր առմամբ, տնտեսական աճի ազդեցությունն աղքատության կրճատման և աղքատների ծախսերի ապահովման առումով առանձնացրել ենք՝ ուղղակի և անուղղակի: Սա քաղաքականության տեսանկյունից կարևոր է: Տնտեսական աճի ուղղակի ազդեցությունը վերաբերում է աղքատների ստեղծվող եկամուտներին, իսկ անուղղակի ազդեցությունը՝ պետական և մասնավոր ներքին տրանսֆերտների աճին:

Համաձայն վերլուծությունների, ցածր և միջին եկամտային խմբերում աշխատավարձը, մյուս բոլոր եկամուտների տեսակների համեմատ, ամենակարևոր եկամտի աղբյուրն է: Այն ապահովում է, որ ցածր եկամուտներ ունեցող բնակչության առաջին կեսի 19 տոկոսը² աղքատ չլինի, իսկ 30³ տոկոսը ծայրահեղ աղքատ չլինի: Այնուհանդերձ, եթե 2005-ին առաջին 5 դեցիլների բնակչությունը նույնիսկ որևէ աշխատավարձ չստանար, միևնույն է աղքատությունը և ծայրահեղ աղքատությունը 1998/99-ի նկատմամբ նվազելու էր: Սա ցույց է տալիս, որ աղքատության կրճատումը և աղքատների ծախսերն ապահովում են բոլոր եկամուտները միասին և աղքատ չլինելու համար եկամուտների որևէ տեսակի դերը դոմինանտ չէ: Աշխատավարձից բացի մյուս բոլոր եկամուտներն առանձին-առանձին կարևորություն գրեթե չունեն:

Ծայրահեղ աղքատ չլինելու համար եկամտի առանձին տեսակներն արդեն մեծ կարևորություն են ստանում: Այսպես, ծայրահեղ աղքատ չլինելու համար, աշխատավարձից հետո, ամենամեծ դերն ունեն պետական սոցիալական դրամական տրանսֆերտները և

¹ Հայաստանն աշխարհում առանձնանում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի հավաքագրման ցածր մակարդակով: Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը տնտեսական աճին զուգընթաց նվազում է:

² Ողջ բնակչության 9.6 տոկոսը, տե՛ս գծապատկեր 2 (=39.4-29.8):

³ Ողջ բնակչության 14.6 տոկոսը, տե՛ս գծապատկեր 2 (=19.2-4.6):

գյուղատնտեսությունը (գրեթե հավասարապես): Այնուհանդերձ, սույն ընտանեկան նպաստների դերը, որը և հենց ուղղված է աղքատներին, փոքր է: Այն գրեթե հավասար է ներքին մասնավոր տրանսֆերտներին: Անհամեմատ ավելի մեծ դեր ունեն արտաքին տրանսֆերտները, դրանք էապես գերազանցում են նաև ինքնազբաղվածությունից եկամուտների դերին (տե՛ս գծապատկերներ 4-7):

Աղքատության կրճատումը որոշակիորեն փոխել է աղքատների սոցիալ-ժողովրդագրական պատկերը: Աղքատությունը գրեթե հավասարապես է կրճատվել թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մոտ (կանանց մոտ մի փոքր ավելի բարձր է): Նկատվում է առավել բարձր տարիքային խմբերում աղքատության կրճատման բարձր տեմպեր: Եթե միջինում աղքատությունը կրճատվել է 46.9 տոկոսով, ապա 61 տարեկանից բարձր անձանց մոտ աղքատությունը կրճատվել է 52 տոկոսով: Աղքատության կրճատման ամենաբարձր տեմպը 1 անդամ ունեցող տնային տնտեսություններին է՝ 64.1 տոկոս: Աղքատության կրճատման տեմպը բարձր է նաև երեխա չունեցողների մոտ՝ 59 տոկոս: Այս ամենը խոսում է այն մասին, որ կենսաթոշակները և մյուս տրանսֆերտները, հատկապես միայնակ թոշակառուների շրջանակներում, աղքատության կրճատմանը նպաստել են: Այնուհանդերձ բազմանդամ, բազմազավակ և երիտասարդ ընտանիքների մոտ սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը փոքր է:

Վերլուծությունները պարզել են նաև, որ զբաղվածությունը և մասնակցությունն աշխատանքի շուկայում աղքատության կրճատման երաշխիքներ չեն: Աշխատանքի շուկայում չմասնակցողների շրջանակներում աղքատությունը կրճատվել է ավելի արագ, քան ոչ մասնակիցների (տե՛ս աղյուսակ 6):

Աղքատության գնահատման առումով չափազանց կարևոր է աղքատության գծի հաշվարկը: Աղքատության գիծը Հայաստանում շատ զգայուն է, դրա փոքր-ինչ փոփոխությունները հանգեցնում են աղքատության և ծայրահեղ աղքատության գնահատականների էական շեղման: Գտնում ենք, որ 2004 թվականի և հետևաբար նաև 2005 թվականի⁴ աղքատության գծերը թերագնահատված են: Դրանք իրական արտահայտությամբ գիջում են 1998/99 թվականին կիրառված աղքատության և ծայրահեղ աղքատության գծերին: Սրա համար որևէ հիմք չի կարող լինել, քանի որ «վագրային տեմպերով աճը» և հասարակության, տնտեսության և կենցաղի զարգացումը հանգեցրել են երկրում նվազագույն ստանդարտների և պահանջմունքների փոփոխության: Ուստի չենք կարող կիրառել հին չափանիշները թռիչքաձև զարգացում ապրած և վերափոխված մերօրյա հասարակությունում: Այսինքն՝ աղքատության գիծը պետք է արտահայտի ընթացիկ կյանքը, և, հետևաբար, էապես բարձր լինի 1998/99 թվականի աղքատության գծից: Հասկանալի է, որ այդ դեպքում աղքատության մակարդակը Հայաստանում կտրուկ կաճի:

Մեր հետազոտությունները և փորձը, ինչպես նաև սպառման և եկամուտների աճի ցուցանիշների համադրումը մակրոցուցանիշների հետ (ազգային հաշիվների վիճակագրություն), բարձր դեցիլային խմբերում սպառման և եկամուտների աճի անհավատալիորեն դանդաղ տեմպերը, բնակչության կողմից սպառված 1 կկալորիաի միջին գների գնահատականները, ինչպես նաև ՏՏԿԱՅ տվյալների բազաների դժվար հասանելիությունը (հասանելիության դեպքում դրանց առանձին բաժիններում սխալները կամ տեղեկատվության ոչ լիարժեքությունը) մեր մոտ նվազեցնում է ՏՏԿԱ հետազոտությունների նկատմամբ վստահությունը: Խորին հարգանքով և բարեկամաբար վերաբերվելով ՀՀ ԱՎԾ ողջ աշխատակազմին՝ մենք կասկածում ենք իրականացվող

⁴ 2005 թվականի աղքատության գծերի հաշվարկը հիմնվում է 2004 թվականի աղքատության գծերի վրա: 2004-ին աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է 2004-ին, և հաջորդ տարիներին պետք է կիրառվեն 2004-ի նույն գծերը՝ ճշգրտված գնաճով:

հետազոտությունների դաշտային աշխատանքների որակի և ընտրանքում բարձր եկամտային խմբերի ներկայացվածության բավարար լինելու մեջ:

2. Կովկասյան վագրը

Հայաստանում 90-ականների սկզբի խորը տնտեսական անկմանը հաջորդեց բարձր և անընդհատ տնտեսական աճը, որը 2001-ից հետո էլ ավելի արագանալով, շարունակվում է տարեկան երկնիշ թվերով: Արդեն 2004-ին Հայաստանում ստեղծվող համախառն եկամտի իրական մակարդակը գերազանցեց Խորհրդային վերջին տարիների մակարդակը: 2005 թվականին իրական ՀՆԱ-ն ավելի քան երկու անգամ գերազանցեց 1997 թվականի մակարդակը, իսկ 2006 թվականին՝ 2000 թվականի մակարդակը:

Տնտեսական աճի այս բարձր տեմպերը շատ վերլուծաբանների հիշեցնում են Հարավարևելյան Ասիայի երկրների տնտեսական բումը: Համաշխարհային բանկի կողմից 2006 թվականին հրատարակված աշխատությունում⁵ Հայաստանը կոչվում է «Կովկասյան վագր»՝ անընդհատ և տպավորիչ տնտեսական աճի տեմպերը համեմատելով «ասիական վագրեր» տնտեսությունների հետ:

Աճի հիմնական աղբյուրներն արտաքին խնայողությունների և եկամուտների ներհոսքն է՝ ինստիտուցիոնալացված և անհատական մակարդակներում: Սրանք վերաբերվում են միջազգային և դոնոր կազմակերպություններից, առանձին երկրներից, «Հին» և «Նոր» հայկական սփյուռքից, արտագնա աշխատանքից ստացվող ֆինանսական և եկամտային աջակցությանը:

Աճի կարևոր աղբյուր է նաև անցած տարիների ընթացքում (շատ հաճախ կոռուպցիոն և անարդար կառավարման միջոցով) ազգային հարստության վերաբաշխման արդյունքում առանձին անձանց շրջանակներում կենտրոնացած կապիտալը:

Կոռուպցիայի բարձր մակարդակը և տարածվածությունը, որը չափազանց բացասական է երկրի զարգացման համար, անցած տարիների ընթացքում որոշակի դրական ազդեցություն է ունեցել տնտեսական աճի ապահովման համար: Կոռուպցիայի տարածվածությունը դյուրինացրել է տնտեսվարումը՝ պլանավորման, հաշվառման, կազմակերպման և այլ փուլերում, արդյունքում, քիչ փորձ և ձեռնարկչատիրական կարողություններ ունեցող նոր ձեռնարկությունները փաստորեն ստացել են «սուբսիդավորում», որը չնայած աղավաղումներին, նպաստել է աճին:

Հայաստանում տնտեսական աճին էապես նպաստել են ինտենսիվորեն իրականացված առաջին սերնդի բարեփոխումները: Տնտեսության ազատականացումը և շուկայական ենթակառուցների և ինստիտուտների ձևավորումը արձագանքեցին և ապահովեցին տնտեսական զարգացումը և աճը:

Տնտեսական աճը տնտեսության բոլոր հատվածներում է, բայց այն առաջնորդում է շինարարությունը, ծառայությունների ոլորտները, սննդի արդյունաբերությունը և այլն: Արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն այս տարիներին ունեցել են գրեթե նույն չափ մասնակցություն աճին (գյուղատնտեսությունն ավելի շատ): Այնուհանդերձ, «վագրի» հիմնական պատճառը շինարարության աճն էր, որն ապահովել է տնտեսական աճի շուրջ 1/3-ը՝ ավելի շատ, քան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միասին վերցրած:

⁵ “Armenia The Caucasian Tiger, (In Two Volumes), Volume 1: Policies to Sustain Growth”, by Saumya Mitra and others, Poverty Reduction and Economic Management Unit, The World Bank, 2006

Գրանցված իրավաբանական անձանց թվաքանակը 2005-ին 1996-ի համեմատ աճել է ավելի քան 73 տոկոսով՝ վերջին տարիներին շարունակելով միջին տարեկան մոտ 4 տոկոս անընդհատ աճել:

Արդյունքում, դեռևս 1999 թվականին 50 տոկոսից ավելի աղքատության մակարդակ և աշխարհում անհավասարության ամենաբարձր մակարդակ ունեցող երկրներից մեկը՝ Հայաստանը, այսօր դասվում է միջին եկամուտներ ունեցող երկրների թվին:

3. Աղքատների եկամուտները և աղքատությունը

Աղքատության և անհավասարության կրճատումը, կամ աղքատների եկամուտների աճը, կարող է պայմանավորվել մի շարք գործոններով: Նախ և առաջ դա տնտեսական աճի ուղղակի ազդեցությունն է, այսինքն՝ աղքատների կողմից ստեղծվող եկամուտների աճը (աշխատավարձ, ինքնազբաղվածությունից և գյուղատնտեսությունից եկամուտներ):

Ի լրումն սրանց, աղքատների եկամուտների հնարավոր աճը կարող է պայմանավորվել հանրային և մասնավոր տրանսֆերտներով: Մասնավորապես, աղքատության կրճատմանն ուղղված ընտանեկան նպաստները և այլ պետական սոցիալական տրանսֆերտները, ընտանեկան ցանցերի միջոցով՝ բարեկամներ, հարազատներ, ընկերներ, Հայաստանի այլ բնակավայրերից ստացվող օժանդակությունը (ներքին մասնավոր տրանսֆերտներ), ինչպես նաև արտերկրից ստացվող դրամական օժանդակությունը և արտագնա աշխատանքից եկամուտները (արտաքին տրանսֆերտներ)⁶:

Տնտեսական աճի և ստեղծվող եկամուտների ուղղակի դերը

Տնտեսական աճն աղքատության կրճատման վրա ուղղակի ազդեցության կունենար, եթե աղքատներն ուղղակի մասնակցեին աճի գործընթացին: Այսինքն՝ նախ և առաջ դա կնշանակի աղքատների նոր զբաղվածության և ինքնազբաղվածության աճ, և երկրորդ, զբաղված աղքատների կամ ինքնազբաղվածների եկամուտների նախորդ ժամանակահատվածի նկատմամբ աճ:

Չնայած տնտեսական աճին, Հայաստանում գործազրկության մակարդակը բարձր որակավորում չպահանջող ճյուղերում բավականին բարձր է: Միաժամանակ, բարձր որակավորում պահանջող մի շարք ոլորտներում, որոնք թեև սովորաբար փոքր են, աշխատուժի պահանջարկը կարող է գերազանցել առաջարկին: Եթե նկատի ունենանք նաև, որ գործնականում բացակայում է կամ նոմինալ է աշխատուժի և աշխատավարձի կարգավորման պետական քաղաքականությունը, ապա պետք է պնդել, որ մեծամասամբ աշխատուժի շուկայում գները թելադրում են արտադրողները: Արդյունքում, իրական աշխատավարձերի աճը չի կարող մեծ լինել ցածր որակավորում պահանջող ոլորտներում: Սակայն, միաժամանակ, բարձր որակավորում պահանջող ոլորտներում աշխատավարձերի աճը բավականին մեծ է:

Աղքատ ընտանիքները և մարդիկ սովորաբար չեն տիրապետում բարձր արտադրողական նյութական և ոչ նյութական ակտիվների, չունեն որակյալ կրթություն: Ուստի, աղքատների հիմնական տնտեսական ռեսուրսը կարող է լինել սեփականաշնորհման արդյունքում ձեռքբերած գյուղատնտեսական ոչ մեծ հողակտորը և/կամ շուկայի կողմից ներկայացվող պահանջների համեմատ ոչ բարձր որակավորմամբ աշխատուժը: Այս պայմանները թույլ են


⁶ Տրանսֆերտները միակողմանի անհատույց վճարումներ են: Արտերկրից ստացվող եկամուտների մի մասը աշխատանքի, ծառայությունների կամ կապիտալ դիմաց ստացվող եկամուտներ են (գործոնային եկամուտներ), իսկ մյուս մասը՝ տրանսֆերտներ: Տեքստում արտերկրից ստացվող բոլոր եկամուտները և տրանսֆերտները դիտարկվում են միասին՝ պայմանականորեն դրանց անվանակոչելով «արտաքին տրանսֆերտներ»:

տալիս պնդել, որ վերջին տարիների ընթացքում աղքատները չէին կարող ընդգրկվել (կամ ընդգրկված լինել) բարձր որակավորում պահանջող ոլորտներում: Հիմնվելով նաև այն ենթադրության վրա, որ զբաղվածությունից եկամուտների աճը տեղի է ունեցել միայն բարձր որակավորում պահանջող ոլորտներում, ապա, հետևաբար, աշխատող աղքատների եկամուտների նկատելի աճ չէր կարող տեղի ունենալ (չի վերաբերվում գյուղատնտեսությանը): Աղքատների զբաղվածության և նոր եկամուտների աճ կարող էր տեղի ունենալ միայն գյուղատնտեսությունում և ցածր որակավորում պահանջող և վարձատրվող ոլորտներում:

Աղքատների ստեղծվող եկամուտների աղբյուրները կարող են լինել աշխատավարձը, ինքնազբաղվածությունից եկամուտը և գյուղատնտեսությունից եկամուտը⁷: Վերլուծենք⁸ ՏՏԿԱ հետազոտության 2005 թվականի տվյալները պարզելու համար այս եկամուտների դերն ընդհանրապես բնակչության եկամուտների և աղքատ չլինելու առումներով:

Գծապատկերում, ներկայացվում են աղքատության մակարդակների հնարավոր գնահատականները, առանց որևէ աշխատավարձի և դրան հավասարեցվող եկամուտների: Սրա համար մի պարզ արտահոսում ենք արել, որ եթե նշված եկամուտները չստացվեին, ապա տվյալ տնային տնտեսությունում ընթացիկ ծախսերը (տվյալ դեպքում մեկ չափահասի հաշվով սպառման ագրեգատը) համապատասխան չափով ավելի փոքր կլիներ և որևէ այլ փոփոխություններ չէր լինի: Արտահոսումը կոպիտ է, բայց թույլ կտա հասկանալ աշխատավարձի և դրա հնարավոր աճի դերը աղքատների սպառման ապահովման համար:

Գծապատկեր 1. Աղքատության և անհավասարության գնահատականներ, աշխատավարձի դերը



Գծապատկերից երևում է, որ որևէ վարձու աշխատանքից եկամուտ չստանալու դեպքում, 2005 թվականին Հայաստանում աղքատությունը կկազմեր շատ ավելի բարձր՝ շուրջ 53 տոկոս: Սա ցույց է տալիս, որ աշխատավարձը, ինչպես և պետք էր սպասել, եկամտի կարևոր աղբյուր է: Աշխատավարձերը հատկապես կարևոր են եկամուտների և ծախսերի որոշակի հավասարությունն ապահովելու առումով: Գծապատկերից երևում է, որ առանց


⁷ Նկատի ունենալով, որ աղքատները չեն կարող տնօրինել կապիտալ և լինել բիզնեսի հիմնադիրներ (հակառակ դեպքում աղքատ չէին լինի)՝ տոկոսի, ռենտային և շահույթի տեսքով եկամուտները չեն դիտարկվում որպես աղքատների եկամուտների աղբյուր: Աղքատների կողմից փոքր ձեռնարկչատիրությունն արտահայտվում է ինքնազբաղվածությունից եկամուտներում:
⁸ Բոլոր վերլուծությունների համար օգտվում ենք ՏՀՀ Կենտրոնի տրամադրության տակ գտնվող ՏՏԿԱՀ և այլ տվյալների բազաներից, որոնք ստացվել են պաշտոնական աղբյուրներից: ՏՀՀ Կենտրոնում 1998/99թթ. ՏՏԿԱՀ տվյալների բազայի ոչ լիարժեքությունը և որոշ տվյալների բացակայությունը մեզ հնարավորություն չի տալիս առավել խորը և նկարագրողական վերլուծություններ կատարել: Ուստի, ցավոք, վերլուծությունները սահմանափակվում են առկա տվյալների շրջանակներում:

աշխատավարձային եկամուտների, սպառման անհավասարությունը Հայաստանում եապես բարձր կլիներ՝ 36.08 (Ջինի գործակից):

Այնուհանդերձ, աղքատության կրճատման առումով աշխատավարձը և դրա աճը մեծ դեր չունի: Ծիշտ Է, այս դեպքում աղքատությունը Հայաստանում շատ մեծ կլիներ (53 տոկոս), սակայն ավելի փոքր՝ քան 1998/99 փաստացի աղքատության գնահատականը: Այսինքն՝ եթե 2005-ին աշխատավարձի տեսքով եկամուտներ ընդհանրապես չստացվեին, ապա միևնույնն Է, ըստ հետազոտության տվյալների, 1998/99 թվականի համեմատ 2005-ին աղքատությունը կրճատվելու էր:


Որպեսզի փորձենք առավել տեսանելի դարձնել աղքատների և ծայրահեղ աղքատների ընթացիկ ծախսերի ապահովման գործում աշխատավարձերի դերը, նույն վարժությունը կատարենք՝ ենթադրությունը պահելով միայն առաջին 5 դեցիլների համար: Այսինքն՝ գնահատենք 2005 թվականին աղքատության հնարավոր մակարդակն այն դեպքում, երբ ենթադրաբար բնակչության ամենաաղքատ 50 տոկոսը չի ստանում որևէ աշխատավարձ և դրան հավասարեցվող եկամուտներ:

Գծապատկեր 2. Աղքատության գնահատականներ, աշխատավարձի դերը 1-5 դեցիլներում



Եթե բնակչության ամենացածր եկամուտներ ունեցող 50 տոկոսն աշխատավարձ չստանար, աղքատությունը 29.8 տոկոսի փոխարեն կկազմեր 39.4 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը 4.6 տոկոսի փոխարեն կկազմեր 19.2 տոկոս: Սակայն, այնուամենայնիվ Հայաստանում թե՛ աղքատությունը, թե՛ ծայրահեղ աղքատությունն ավելի փոքր կլիներ, քան 1999 թվականին էր:

Գծապատկեր 3. Աղքատության գնահատականներ, ստեղծվող և տրանսֆերտային եկամուտների դերը 1-5 դեցիլներում



Գծապատկերում ներկայացնում ենք աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակների մեկ այլ հնարավոր գնահատականներ: 1998/99 և 2005 թվականների փաստացի ցուցանիշների կողքին ներկայացվում են տնտեսական աճի ուղղակի գործոնների հաշվին և տրանսֆերտների հաշվին բնակչության 1-5 դեցիլներում աղքատության մակարդակի փոփոխությունները: «Տնտեսական աճից ուղղակի եկամուտներ» փոփոխականը ցույց է տալիս աղքատության հնարավոր գնահատականը 2005 թվականի համար, եթե բնակչության ամենաղքատ 50 տոկոսն աշխատավարձից, ինքնազբաղվածությունից և գյուղատնտեսական գործունեությունից բացի որևէ այլ եկամուտ չստանար (այսինքն՝ սպառման ագրեգատը համապատասխան չափով փոքր լիներ): «Տրանսֆերտներից եկամուտներ» փոփոխականը ցույց է տալիս աղքատության հնարավոր գնահատականը՝ եթե բնակչության 1-5 դեցիլները ստանային միայն պետական և մասնավոր տրանսֆերտների (ներառյալ արտաքին տրանսֆերտները) տեսքով եկամուտներ:


Այսպիսով, բոլոր տիպի տրանսֆերտային եկամուտների բացակայության դեպքում աղքատությունը կազմելու էր 38 տոկոս, որը շուրջ 18 տոկոսով ցածր է 1998/99 թվականի աղքատության մակարդակից: Աշխատավարձ, ինքնազբաղվածությունից և գյուղատնտեսությունից եկամուտներ չստանալու դեպքում, աղքատությունը կկազմեր 43 տոկոս, որը 13 տոկոսով փոքր է 1998/99 թվականի ցուցանիշից:

1999 թվականին առաջին 5 դեցիլների բնակչության սպառողական ծախսերը ցածր են եղել աղքատության գծից, այսինքն՝ բոլորը եղել են աղքատներ: Եթե ենթադրենք, որ 1999-ից հետո երկրում աղքատացողներ չեն եղել, ստացվում է, որ այս նույն բնակչության շուրջ 3/5-րդ մասը շարունակում է բնակվել աղքատության մեջ, իսկ 2/5-րդ մասի ծախսերը գերազանցում են աղքատության գիծը և ներկայում աղքատ չեն: Տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս ճշգրտորեն գնահատել աղքատության կրճատման վրա նշված գործոնների դերը, սակայն ակնհայտ է դառնում աղքատության կրճատման վրա չկա մեկ կարևոր, դոմինանտ գործոն: Աղքատների ծախսերի ապահովման առումով բոլոր եկամտային աղբյուրներն էլ կարևոր են:

Գծապատկերում ներկայացվում է գյուղատնտեսությունից և ինքնազբաղվածությունից եկամուտների դերն աղքատների եկամուտների և ծախսերի ապահովման առումով: Դրանց

դերն աշխատավարձի համեմատ շատ ավելի փոքր է, իսկ անհավասարության կրճատման առումով ինքնազբաղվածությունը ոչ էական:

Գծապատկեր 4. Աղքատության և անհավասարության գնահատականներ, գյուղատնտեսության և ինքնազբաղվածությունից եկամուտների դերը



Պետական տրանսֆերտներ

Աղքատների եկամուտների ապահովման և քաղաքականության տեսանկյունից շատ կարևոր են տրանսֆերտները: Ընդհանուր առմամբ, աղքատության կրճատման վրա հանրային (պետական) սոցիալական տրանսֆերտների ազդեցությունը կարող ենք դիտարկել հետևյալ երեք ասպեկտներով՝ տնտեսական, քաղաքական և ծրագրային: Առաջինը կնշանակի, որ տնտեսական աճի հաշվին առավել շատ ռեսուրսներ են ուղղվում սոցիալական տրանսֆերտներին և աղքատության կրճատմանը: Քաղաքական ասպեկտն ենթադրում է գերակայությունների փոփոխություն, այսինքն՝ տվյալ բյուջետային եկամուտների պայմաններում առավել մեծ գումարներ են ուղղվում սոցիալական տրանսֆերտներին և աղքատության կրճատմանը (ի հաշիվ այլ ոլորտների): Վերջինը՝ ծրագրային ասպեկտը, կենթադրի նույն ռեսուրսների և գերակայությունների պայմաններում սոցիալական ծրագրերի իրականացման արդյունավետության աճ, կամ հասցեավորման բարելավում: Այս երեք ուղղություններն առանձին-առանձին կամ միասին կարող են պայմանավորել աղքատության կրճատումը:


Հայաստանում հիմնական հանրային սոցիալական ծրագրերը դրամական տրանսֆերտներ են: Ընդ որում, եթե հաշվի չառնենք ապահովագրական կենսաթոշակները, որոնք ամենամեծ տրանսֆերտներն են, սոցիալական աջակցության հիմնական ծրագիրն ընտանեկան նպաստի համակարգն է: Այս համակարգի նպատակն աղքատ ընտանիքներին ամենամյա դրամական աջակցության տրամադրումն է: Մեր նախկին հետազոտությունները պարզել են, որ այս համակարգը Հայաստանում կարևոր դեր ուներ 2004-ի աղքատության կրճատման առումով, սակայն, այնուհանդերձ, վատ է հասցեավորված⁹: Համակարգում շատ մեծ է ընդգրկման սխալը և չընդգրկման սխալը:

Նույն եզրակացությանն ենք գալիս, 2005-ի տվյալների վերլուծությամբ: Այսպես, սոցիալական դրամական տրանսֆերտները, որոնք ներառում են կենսաթոշակները,

⁹ Տե՛ս «Սոցիալական աջակցության հասցեականության բարելավումը Հայաստանում», S234, 2006

աղքատության կրճատման առումով բավականին մեծ դեր ունեն: Առանց դրանց վճարման աղքատությունը 2005-ին կկազմեր 37.7 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 11.4 տոկոս:

Գծապատկեր 5. Աղքատության և անհավասարության գնահատականներ, պետական տրանսֆերտների դերը




Չնայած դրան, կենսաթոշակները և բոլոր սոցիալական տրանսֆերտները միասին ավելի մեծ դեր ունեն աղքատների ծախսերի ապահովման առումով քան գյուղատնտեսությունից եկամուտները: Այնուհանդերձ, սույն Ընտանեկան նպաստի դերը, ինչպես նշվեց, այնքան էլ մեծ չէ: Եթե 2005-ին չվճարվեին ընտանեկան նպաստներ և երեխայի միանվագ նպաստներ, ապա աղքատությունն ավելի մեծ կլիներ ընդամենը 1.3 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1.7 տոկոսային կետով:

Ներքին մասնավոր տրանսֆերտները

Հայաստանում բնակվող ընկերներից, բարեկամներից, հարազատներից ստացվող օժանդակությունը բավականին կարևոր աղբյուր է աղքատների ծախսերի և սպառման ապահովման առումով: Տնտեսական աճն անուղղակիորեն նպաստում է նման տիպի տրանսֆերտների աճին և արդյունքում, աղքատության կրճատմանը: Այսինքն՝ տնտեսական աճը կարող էր բերել աղքատ տնային տնտեսությունների ընտանեկան ցանցի անդամների (ընկերներ, բարեկամներ, հարազատներ) եկամուտների աճի, որի արդյունքում էլ այս տնային տնտեսությունները կարող են մեծացնել ներքին տրանսֆերտները: Աղքատների ծախսերի ապահովման առումով դրանց դերն ավելի մեծ է, քան ընտանեկան նպաստինը, իսկ ծայրահեղ աղքատների առումով՝ գրեթե նույնն է:


Գծապատկեր 6. Աղքատության և անհավասարության գնահատականներ, մասնավոր տրանսֆերտների դերը



Արտաքին տրանսֆերտները

Մեր հետազոտությունները պարզել են, որ Հայաստանի տնային տնտեսությունների շուրջ 1/3-ը դրամական աջակցություն կամ եկամուտներ են ստանում արտերկրից: Խոսքը վերաբերում է թե՛ տրանսֆերտներին, թե՛ արտագնա աշխատանքից ստացվող եկամուտներին: Արտերկրից ստացվող տրանսֆերտները չափազանց մեծ և կարևոր աղբյուր են հատկապես ծայրահեղ աղքատության կրճատման առումով: Առանց այս տրանսֆերտների, 2005-ին աղքատության մակարդակը կկազմեր՝ 35.3 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը 9.6 տոկոս: Այսինքն՝ առանց արտաքին տրանսֆերտների Հայաստանում ծայրահեղ աղքատների թվաքանակն ավելի քան 2 անգամ մեծ կլիներ: Սա նշանակում է, որ աղքատների ծախսերի ապահովման առումով արտաքին տրանսֆերտները գերազանցում են երկրում ինքնազբաղվածությունից եկամուտներին և փոքր-ինչ զիջում գյուղատնտեսությունից ստացվող եկամուտներին և բոլոր տիպի սոցիալական տրանսֆերտներին և կենսաթոշակներին:

Գծապատկեր 7. Աղքատության փոփոխությունը նշվող եկամուտների բացակայության դեպքում, 2005թ.



4. Աղքատության կրճատման պատկերը

Աղքատության կրճատումն ապահովող գործոններն իրենց համապատասխան ազդեցությունը և հետքը պիտի թողնեին աղքատության պատկերի փոփոխության վրա: Այսինքն՝ քանի որ աղքատությունը կրճատվել է միանգամից և արագ, ինչ-որ ուժեղ գործոնների ազդեցության տակ, ապա աղքատների ժողովրդագրական և սոցիալական պատկերի փոփոխությունը պետք է արտահայտի դա: Փորձենք ուսումնասիրել աղքատության ընդհանուր պատկերի փոփոխությունը՝ պարզելու համար, թե արդյո՞ք նկատելի են այն գործոնները որոնք աղքատների շուրջ 50 տոկոսին հանել են աղքատությունից:

Աղյուսակից երևում է, որ աղքատությունն էապես կրճատվել է գրեթե բոլոր տարիքային խմբերում և չկա առանձնացված գենդերային պատկեր: Կանանց մոտ աղքատության կրճատումը փոքր-ինչ ավելին է (գրեթե հավասար է) քան տղամարդկանց մոտ:

Աղյուսակ 1. Աղքատությունը և դրա պատկերն ըստ տարիքային կառուցվածքի

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.1	29.8	46.9
կանայք	56.3	29.7	47.2
Տղամարդիկ	55.9	30.1	46.2
0-5 տարեկաններ	63.3	34.9	44.9
6-14 տարեկաններ	51.6	32.0	38.0
15-17 տարեկաններ	52.9	31.2	41.0
18-25 տարեկաններ	59.7	29.2	51.1
26-45 տարեկաններ	54.6	30.3	44.5
46-60 տարեկաններ	56.6	27.2	51.9
61տ և ավելի բարձր	58.3	27.9	52.1

Աղքատության 46.9 տոկոս կրճատման միջին տեմպից ավելի արագ աղքատության կրճատման տեմպ է գրանցվել 46-ից բարձր և 18-25 տարիքի անձանց շրջանակներում: Աղքատության կրճատումը հատկապես ավելի մեծ է 61-ից բարձր անձանց մոտ: Այսինքն՝ ամենաակտիվ աշխատանքային տարիքի խմբի անձանց աղքատությունը կրճատվել է ավելի քիչ, քան մյուս խմբերում (միջինից քիչ): Սա հուշում է, որ աղքատության կրճատման մենաշնորհը տնտեսական աճին և զբաղվածության աճին չէ: Մինչդեռ տարիքային կենսաթոշակների աճի հաշվին աղքատության կրճատման արդյունավետությունն ակնառու է: Սոցիալական ոչ արդյունավետ հասցեական քաղաքականության մասին, մասնավորապես ընտանեկան նպաստի մասով, վկայում են նաև հաջորդ աղյուսակները:

Աղյուսակ 2. Աղքատությունը և դրա պատկերն ըստ ընտանիքներում անդամների քանակի

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.1	29.8	46.9
1 անդամ	43.7	15.7	64.1
2 անդամ	49.8	18.7	62.4
3 անդամ	49.0	18.9	61.4
4 անդամ	50.1	25.0	50.1
5 անդամ	54.1	34.8	35.7
6 անդամ	63.1	34.0	46.1
7 անդամ	63.8	46.8	26.6

Բազմաճյուղյա ընտանիքներում, բազմազավակ և ծերեր ունեցող ընտանիքներում աղքատության կրճատման տեմպերը գիշում են աղքատության կրճատման միջին տեմպերին:

Աղյուսակ 3. Աղքատությունը և դրա պատկերն ըստ ընտանիքներում երեխաների և ծերերի քանակի

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.1	29.8	46.9
Ընտանիքում երեխա չունեցողներ	54.2	22.2	59.0
1 երեխա ունեցողներ	55.6	29.6	46.8
2 երեխա ունեցողներ	56.9	32.1	43.6
3 երեխա ունեցողներ	55.8	37.4	33.0
4 և ավելի երեխա ունեցողներ	58.5	43.9	25.0
Ընտանիքում ծեր չունեցողներ	52.9	27.6	47.8
1 ծեր ունեցողներ	60.4	32.8	45.7
2 և ավելի ծեր ունեցողներ	61.0	32.8	46.2

Ըստ կրթության մակարդակի աղքատության կրճատման պատկերը նույնպես բավականին խոսուն է: Կրթության հատույցի էֆեկտը նկատելի է, հատկապես բարձրագույն կրթամակարդակում: Բարձրագույն կրթություն ունեցողների մոտ աղքատությունը կրճատվել է շուրջ 66 տոկոսով, ինչը չափազանց բարձր է մյուս բոլոր սոցիալական կամ ժողովրդագրական խմբերից: Սա հիմնավորում է նախորդ բաժնում առաջ քաշված այն թեզը, որ բարձր որակավորում պահանջող ճյուղերում է նկատվել միայն իրական աշխատավարձերի աճ: Տարրական և ավելի ցածր կրթություն ունեցողների մոտ նույնպես բավականին բարձր են աղքատության կրճատման տեմպերը: Նման կրթություն ունեն Չայաստանում մեծամասամբ տարեցները:

Աղյուսակ 4. Աղքատությունը և դրա պատկերն ըստ կրթամակարդակի*

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.4	28.9	48.8
Տարրական և ցածր	62.3	29.9	52.0
Թերի միջնակարգ	63.3	37.0	41.5
Միջնակարգ ընդհանուր	58.9	34.4	41.6
Միջնակարգ մասնագիտական	55.6	26.1	53.1
Բարձրագույն	44.9	15.4	65.7

*16-ից բարձր քնակչության համար

Զբաղվածությունն աղքատության կրճատման երաշխիք չէ: Աղյուսակում առանձնապես չի երևում աշխատողների թվաքանակի աճին զուգընթաց աղքատության կրճատման միտում:

Աղյուսակ 5. Աղքատությունը և դրա պատկերն ըստ ընտանիքում աշխատողների թվաքանակի*

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.4	28.9	48.8
Ոչ ոք չի աշխատում	68.9	35.2	48.9
Աշխատում է 1 անդամ	58.3	29.8	48.9
Աշխատում է 2 անդամ	48.8	23.9	51.0
Աշխատում է 3 և ավելի անդամ	50.6	28.7	43.3

*16-ից բարձր քնակչության համար

Ավելին, հաջորդ աղյուսակը ցույց է տալիս, որ աշխատանքային շուկային մասնակիցների մոտ աղքատության կրճատման տեմպը շատ ավելի փոքր է, քան ոչ մասնակիցների մոտ:

Աղյուսակ 6. Աղքատությունը և դրա պատկերն ըստ աշխատանքային շուկայում մասնակցության*

	1998/99	2005	Աղքատության կրճատում
Ընդամենը աղքատներ	56.4	28.9	48.8
Մասնակիցներ	54.2	30.0	44.6
Վարձու աշխատող	48.7	22.7	53.4
Ինքնագբաղված	48.6	27.3	43.8
Այլ գբաղվածներ	45.6	-	-
Գործազուրկներ	69.5	46.9	32.5
Ոչ մասնակիցներ	59.9	27.5	54.1
Կենսաթոշակառուներ	64.0	30.0	53.1
Ուսանողներ	49.1	14.8	69.9
Այլ	60.3	29.9	50.4


**16-ից բարձր քնակչության համար*

Կենսաթոշակառուների մոտ աղքատությունը կրճատվել է 53 տոկոսով, իսկ ուսանողների մոտ 70 տոկոսով: Այստեղ մեծ դեր ունեն արտաքին տրանսֆերտները և կենսաթոշակները, իսկ ուսանողները Հայաստանում ներկայացնում են հասարակության առավել ապահով խավերը:

5. Հին չափանիշներով նոր կյանքը

Աղքատության և դրա կրճատման առումով չափազանց կարևոր է աղքատության գծի ճշգրիտ որոշումը¹⁰: 2005 թվականին, պարենային աղքատության գիծը սահմանվել է 13,266 դրամ, իսկ ընդհանուր գիծը՝ 20,289 դրամ: Գծապատկերը ցույց է տալիս աղքատության հնարավոր մակարդակներն աղքատության տարբեր գծի կիրառման դեպքում: Օրինակ, 1998/99 թվականների աղքատության մակարդակին համարժեք աղքատություն կլիներ 2005-ին, եթե աղքատության ընդհանուր գիծը հավասար լիներ 27000 հազար դրամից մի փոքր բարձր, իսկ ծայրահեղ աղքատության համար՝ 18000 դրամից բարձր:

Գծապատկեր 8. Աղքատության գնահատականներն ըստ աղքատության տարբեր գծերի



Մենք համեմատել ենք, 2005-ի և 1998/99 աղքատության գծերը: Նմանալ դրամական արտահայտությամբ դրանք աճել են՝ աղքատության գիծը շուրջ 15 տոկոսով, իսկ ծայրահեղ աղքատության գիծը՝ 18 տոկոսով, իսկ ոչ պարենային ապրանքների զամբյուղն աճել է ավելի քիչ՝ 9 տոկոսով (տե՛ս աղյուսակ): Եթե փորձենք, գների աճի ազդեցությունը նվազեցնել, ստացվում է, որ 2005 թվականին թե՛ պարենային զամբյուղը, թե՛ ոչ պարենային զամբյուղը Հայաստանում իրական արտահայտությամբ ոչ միայն չեն աճել, այլ նույնիսկ նվազել են: Սա այն դեպքում, երբ տնտեսական աճը բերել է կյանքի որակի և պահանջմունքների աճի:

Այսպես, կիրառելով գների պաշտոնական ինդեքսները՝ ՍԳԻ-ին ոչ պարենային ապրանքների զամբյուղի համար, և ՍԳԻ-ի պարենային ապրանքների գների բաղադրիչը՝ ծայրահեղ աղքատության գծի համար, ստացվում է, որ 2005-ի ծայրահեղ աղքատության գիծը 1999 թվականի համարժեքի գներով կազմում է 10955 դրամ, իսկ աղքատության ընդհանուր գիծը՝

¹⁰ Աղքատության գծի հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է 2004 թվականից սկսած, տե՛ս նաև «Աղքատության գնահատման մեթոդաբանությունը Հայաստանում», S234, 2007:


16982 դրամ: Այսինքն՝ 2005-ին Ծայրահեղ աղքատության գիծը 1998/99-ի համեմատ թերագնահատված է 2.3 տոկոսով, իսկ աղքատության ընդհանուր գիծը՝ 4 տոկոսով:

Աղյուսակ 7. Աղքատության գծի անվանական և իրական աճը 1999-2005 թվականներին

	1998/99	2004	2005	2005/ 1999	2004	2005	2005/ 1999
	<i>ընթացիկ գներով</i>				<i>1999-ի գներով</i>		
Աղքատության գիծ	17,663	19,373	20,289	14.9%	16,329	16,982	-3.9%
Ոչ պարենային ապրանքներ	6,453	6,906	7,023	8.8%	5,962	6,027	-6.6%
Ծայրահեղ աղքատության գիծ	11,210	12,467	13,266	18.3%	10,367	10,955	-2.3%


Եթե 2005-ին կիրառվեր 1998/99 թվականի աղքատության գիծը, ճշգրտված 2005-ի գներով (գումարած սղաճ), ապա աղքատությունը Հայաստանում կկազմեր 31.4 տոկոս (29.8-ի փոխարեն), իսկ ծայրահեղ աղքատությունը 5.3 տոկոս (4.6-ի փոխարեն):

Գծապատկեր 9. Աղքատության գնահատականներն ըստ աղքատության գծի փոփոխության



Սրանք ոչ փոքր շեղումներ են և նշանակում են, որ աղքատության պաշտոնական գնահատականները նույնպես թերագնահատված են, ծայրահեղ աղքատությունը՝ 15.2 տոկոսով, իսկ աղքատությունը՝ 5.4 տոկոսով:

Գծապատկեր 10. 2005թ. պաշտոնական գնահատականի նկատմամբ աղքատության փոփոխությունն աղքատության գծի փոփոխության դեպքում



Եթե ծայրահեղ աղքատության գիծը սահմանվեր 663 դրամով ավելի բարձր (5 տոկոսով), ծայրահեղ աղքատության պաշտոնական գնահատականը մեծ կլիներ 30.4 տոկոսով և կկազմեր 6 տոկոս: 10 տոկոսով ավելի բարձր ծայրահեղ աղքատության գծի դեպքում (1327 դրամով ավելի բարձր, որը հավասար է 14593 դրամ) ծայրահեղ աղքատության մակարդակը կաճեր 63 տոկոսով և կկազմեր բնակչության 7.5 տոկոսը (տե՛ս գծապատկերները):

Աղքատությունը հարաբերական հասկացություն է, և հաշվարկվում է տվյալ կոնկրետ հասարակության ընդհանուր նորմերին և չափորոշիչներին համապատասխան: Ակնհայտորեն, նույն կենսական և սոցիալական պայմաններ ունեցող ընտանիքը մի երկրում (հասարակությունում) կարող է համարվել աղքատ, իսկ մյուսում՝ ոչ: Նույնը ճիշտ է նաև երկրի մեջ տարբեր ռեգիոնների համար:

Տնտեսական աճի և զարգացման «վագրային տեմպերը», վերջին հաշվով, բերել են նաև կյանքի նոր որակի և չափորոշիչների փոփոխության: Հասարակությունը դեռ 15 տարի առաջ զրկված էր նույնիսկ կոմունալ նվազագույն հնարավորություններից (էլեկտրաէներգիա, ջեռուցում և ջրամատակարարում և այլն) և ապրում էր երջանկության և ապահովության պատկերացումների մեկ այլ աշխարհում: Միգուցե և 11210 դրամը (օրական 374 դրամ մեկ չափահասի հաշվով) 1998/99 թվականներին բավարարեր նվազագույն սննդի սպառման համար կամ 6453 դրամը (օրական 215 դրամ)՝ ոչ պարենային ապրանքների սպառման համար, բայց այսօր՝ ոչ: Դեռ 10-15 տարի առաջվա աղքատ հասարակության մի հսկա զանգվածն այսօր ապրում է որակապես մեկ այլ մոլորակում՝ պերճաշուք և առատ: Սպառողական ապրանքների սահմանափակ տեսականին շուկայում փոխարինվել է բազմատեսակ և բազմաքանակ ապրանքներով և ծառայություններով: Փոխվել են սպառման որակի, քանակի և կառուցվածքի նկատմամբ ներկայացվող պահանջները: Հետևաբար, փոխվել են նաև նվազագույն պահանջները կամ աճել աղքատ չլինելու համար ներկայացվող նվազագույն պահանջմունքները:

Մինչդեռ, շարունակելով խոսել զարգացման մասին, աղքատության կրճատումը չափում ենք հին չափորոշիչներով՝ հացի և կարտոֆիլի զամբյուղով և սահմանափակ տեղաշարժման համար տրվող հնարավորությամբ: Աղքատությունը որպես հարաբերական հասկացություն պահանջում է տվյալ հասարակությունում արդի չափորոշիչների կիրառում: Հետևաբար աղքատության գիծը պետք է արձագանքի հասարակության վարքագծի փոփոխությանը:

Աղքատության գիծը հաշվարկվում է աղքատության պարենային զամբյուղի (ծայրահեղ աղքատության գծի) հիման վրա: Աղքատության պարենային զամբյուղի հաշվարկի հիմքում սննդի սպառման նվազագույն էներգետիկան է: Պարենային զամբյուղը դրամական արտահայտությամբ հաշվարկելու համար օրեկան սպառվող սննդամթերքի նվազագույն էներգետիկայի սահմանված ցուցանիշը բազմապատկվում է 1 կկալ միջին գնով, որը գնահատվում է տնային տնտեսությունների ընթացիկ հետազոտության արդյունքների հիման վրա: Ըստ ՏՏԿԱ հետազոտության տվյալների հիման վրա մեր հաշվարկների, 2005 թվականին երկրում սպառված ողջ սննդամթերքի 1 կկալորիայի միջին գինը կազմել է 178 դրամ: Զենց այս գումարն էլ պարենային զամբյուղի հաշվարկի հիմքում է:

Սննդամթերքի գները 1999-2005 թվականների ընթացքում վստահաբար աճել են: Կստացվի, քանի որ իրական արտահայտությամբ պարենի նվազագույն գիծը փոքր է 1998/99-ի գծից (տե՛ս աղյուսակը) կամ սպառված 1 միջին կկալորիայի իրական գինը նվազել է, ուրեմն բնակչության փաստացի սպառումը և դրա որակը նվազել են կամ էլ տվյալները (ընտրանքային հետազոտությունները) պարզապես համադրելի չեն:

Այս բաժնում, մեր հիմնական եզրահանգումները հետևյալն են: Աղքատության գծի ճիշտ որոշումը շատ կարևոր է, քանի որ դրա արդյունքում աղքատության գնահատականն էապես կարող է փոխվել: Աղքատության գծերը 2005-ին 1999-ի համեմատ չեն աճել, նույնիսկ նվազել են, որի համար զարգացում ապրող հասարակությունում որևէ հիմք չկա: Մենք այսօր աղքատություն ենք գնահատում արդեն հին ժամանակների (մինչև տնտեսական բումի) չափորոշիչներով, այսինքն՝ աղքատության գծերը չեն արտահայտում մեր ընթացիկ կյանքի նվազագույն պահանջները: ՏՏԿԱՅ Հայաստանում 1 կկալ սննդամթերքի միջին գնի գնահատականը փոքր է, ինչը ևս խոսում է ընտրանքում բարձր եկամտային խմբերի ցածր ներկայացվածության կամ դաշտային աշխատանքների ցածր որակի մասին:

Հավելվածներ. Աղքատություն և եկամուտների աճ

Աղքատության հիմնական ցուցանիշները, աղբյուրը ԳՅ ԱԿԾ և ՏՀԳԿ հաշվարկներ

	1998/99	2004	2005	Աճի տեմպ 2005/1999
Աղքատության մակարդակը, %	56.1	34.6	29.8	-46.9
Ծայրահեղ աղքատության մակարդակը (շատ աղքատներ), %	21.0	6.4	4.6	-78.1
Աղքատության խորություն, %	17.2	7.4	5.4	-68.6
Աղքատության սրություն, %	7.2	2.4	1.6	-77.8
Ջինի գործակիցն ըստ եկամուտների անհավասարության	0.60	0.395	0.359	-39.9
Ջինի գործակիցն ըստ սպառման անհավասարության	0.30	0.260	0.257	-14.6
Աղքատության մակարդակը, %				
Մայրաքաղաքում	58.4	29.2	23.9	-59.1
Քաղաքային բնակավայրերում	62.1	36.4	30.7	-50.6
Քաղաքային բնակավայրերում առանց Երևանի	65.5	43.9	37.8	-42.3
Գյուղական բնակավայրերում	48.2	31.7	28.3	-41.3
Ծայրահեղ աղքատության մակարդակը, %				
Մայրաքաղաքում	24.8	6.1	3.6	-85.5
Քաղաքային բնակավայրերում	26.2	7.5	5.3	-79.8
Քաղաքային բնակավայրերում առանց Երևանի	27.4	9.2	7.2	-73.7
Գյուղական բնակավայրերում	14.1	4.4	3.2	-77.3
Աղքատության ընդհանուր գիծ, (ամսեկան միջին)				
ՀՀ դրամով	17,663	19,373	20,289	14.9
ԱՄՆ դոլարով	33.8	38.9	44.9	32.7
Ծայրահեղ աղքատության (պարենային) գիծ, (ամսեկան միջին)				
ՀՀ դրամով	11,210	12,467	13,266	18.3
ԱՄՆ դոլարով	21.5	25.0	29.3	36.7

Տնտեսական աճը տնտեսության ճյուղերում, աղբյուրը ԳՅ ԱԿԾ և ՏՀԳԿ հաշվարկներ

	ՀՆԱ-ի կառուցվածքը 1999թ.	Միջին տարեկան աճի տեմպ 1999-2005 թ.	Իրական ՀՆԱ-ն 2005-ին 1999-ի գներով	Մասնակցությունը 1999-2005թթ աճին	
ՀՆԱ	100	11.2	188.7	100	11.2
Արդյունաբերություն	21.2	8.2	33.9	14.3	1.6
Գյուղատնտեսություն	27	7.2	40.9	15.7	1.8
Շինարարություն	8.3	27.7	36.0	31.2	3.5
Ծառայություններ և այլ ճյուղեր	43.5	10.2	77.9	38.7	4.3

Եկամուտները և սպառումն ըստ ազգային հաշիվների և աղքատության դեֆիցիտը, աղբյուրը ԳՅ ԱԿԾ, հեղինակի հաշվարկներ

	1999թ. մլրդ դրամ	2005թ. մլրդ դրամ	Անվանական աճի տեմպ 2005/1999	ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս
ՀԱՏԵ	1109.9	2451.8	120.9	109.3
ՀՆԱ	987.4	2244.0	127.3	100.0
Արտերկրից զուտ գործոնային եկամուտներ և տրանսֆերտներ	122.5	207.8	69.5	9.3
Համախմբված բյուջեի եկամուտներ և տրանսֆերտներ	226.5	449.9	98.6	20.0
Համախմբված բյուջեի ընթացիկ տրանսֆերտներ	32.2	36.1	12.1	1.6
SS տնօրինվող եկամուտ	915.7	2038.0	122.6	90.8
SS սպառում	948.4	1948.2	105.4	86.8
Աղքատության գիծ* (դրամ)	17663	20289	14.9	34.7
Աղքատության դեֆիցիտ	116.7	42.1	-63.94	1.87

* Ներկայացված է ամսական 1 շնչի հաշվով դրամներով: Վերջին սյունակում հաշվարկված է 1 շնչի հաշվով ամսական ՀՆԱ-ի նկատմամբ (34.7 %):

1999-2005 թվականներին եկամուտների և սպառման աճի համադրումը SS ԿԱ հետազոտության տվյալներին, աղբյուրը ԳՅ ԱԿԾ, հեղինակի հաշվարկներ

	Անվանական		Իրական	
	աճի տեմպ	միջին տարեկան աճի տեմպ	աճի տեմպ	միջին տարեկան աճի տեմպ
ՀՆԱ	127.3	14.7	88.7	11.2
SS տնօրինվող եկամուտ	122.6	14.3	84.6	10.8
Աղքատության գիծ	14.9	2.3	-1.4	-0.2
Ծայրահեղ աղքատության գիծ	18.3	2.8	-2.3	-0.4
SS սպառում*	105.4	12.7	76.3	9.9
Սպառման ազդեցատ, 1 չափահասին համարժեք**	51.5	7.2	30.0	4.5
1-ին դեցիլում	78.3	10.1	53.0	7.3
2-րդ դեցիլում	70.7	9.3	46.5	6.6
3-րդ դեցիլում	65.3	8.7	41.9	6.0
4-րդ դեցիլում	61.9	8.4	38.9	5.6
5-րդ դեցիլում	58.9	8.0	36.4	5.3
6-րդ դեցիլում	57.0	7.8	34.7	5.1
7-րդ դեցիլում	55.0	7.6	33.0	4.9
8-րդ դեցիլում	51.7	7.2	30.2	4.5
9-րդ դեցիլում	46.0	6.5	25.3	3.8
10-րդ դեցիլում	34.3	5.0	15.3	2.4
Աղքատության դեֆիցիտ	-63.9	-15.6	-70.1	-18.2
Աղքատության մակարդակ	-46.9	-10.0	-	-
Ծայրահեղ աղքատություն	-78.1	-22.4	-	-

* ԳՅ Ազգային հաշիվների համակարգից

** SS կենսամակարդակի ամբողջական հետազոտության բազայից